ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 13-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ն, Հայ Առաքելական Եկեղեցու հայաստանյան թեմերի առաջնորդների և բարձրաստիճան այլ հոգևորականների ուղեկցությամբ, այցելեց նախագահ Ռոբերտ Քոչարյանին և իր հայրապետական մաղթանքները հաղորդեց նորընտիր նախագահին: Վեհափառ Հայրապետի խոսքերով՝ Հայ Եկեղեցին միշտ կանգնած է եղել պետականության կողքին, և դարեր շարունակ չունենալով պետականություն՝ հայ ժողովուրդը Եկեղեցու շնորհիվ է պահպանել իր ազգային նկարագիրն ու դերը: Այսօր, երբ հայոց պատմության մեջ նոր էջ է բացվում, Եկեղեցին իր ողջ կարելիությամբ, ներքին և արտաքին հզոր կառույցներով պատրաստ է զորավիգ լինել հայրենի պետությանը: Շնորհակալություն հայտնելով ջերմ բարեմաղթանքների համար՝ պրն. Ռոբերտ Քոչարյանն ասաց. «Նախագահի պաշտոնն ստանձնել եմ պատասխանատվության մեծ զգացումով և պատրաստ եմ արդարացնել ժողովրդի վստահությունը»:

Նախագահի գնահատմամբ՝ հասարակության տրամադրություններում կա որոշակի դրական տեղաշարժ, ստեղծվել է բավականին բարենպաստ միջավայր, և այդ մթնոլորտի պահպանման գործում մեծ է նաև Եկեղեցու դերը: Հանդիպման ընթացքում խոսվեց նաև հոգևոր դաստիարակության ոլորտում Հայ Եկեղեցու դերի և կրթական համակարգում կրոնի դասավանդման մասին: Անդրադառնալով քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին՝ նախագահը նշեց, որ այն նաև լուրջ քաղաքական իրադարձություն է, ուստի անհրաժեշտ է, որ անցնի բարձր մակարդակով և որակով:

ՀՀ նախագահի մամուլի գրասենյակ